ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջն առ այն, որ ***փաստաբանների պալատի նախագահն իր լիազորություններն իրականացնելու համար կարող է նշանակել տեղակալներ՝ փաստաբանների կազմից,***

նկատի ունենալով այն, որ փաստաբանների կողմից սահմանված ժամկետում անդամավճար չմուծելու և սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով, ինչպես նաև որոշ դեպքերում այլ հիմքերով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունների իրականացումն առավել նպատակահարմար է վերապահել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) նախագահի առաջին տեղակալի իրավասությանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Պալատի նախագահի առաջին տեղակալ Էմիլ Ամիրխանյանին վերապահել՝

- ***փաստաբանի կողմից սահմանված ժամկետում անդամավճար չմուծելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը.***
- ***փաստաբանի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունը.***
- ***Պալատի նախագահի կողմից իրեն մակագրված դիմումների (հաղորդումների) և դատական սանկցիաների հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու (հարուցելը մերժելու) լիազորությունը:***

2. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 5-ից և գործում է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 4-ը ներառյալ:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

04 հոկտեմբերի 2017թ.
թիվ 313-Ա
ք. Երևան